



96. ՑԱՔԱԹԻՆ ՆԱՂԸԼԸ

Դե վեր նաղըլը ծեզ շատ ա տոր եկալ, անգում կալիք մընն ալ ըմ ըսլական:

Օրերան մըն օր ախշարքան բեխաքաղը մըն մարթ քունում ա ծմակը, թա ցախ կրտրե: Կետին յրա քըցած փեղա կրոմընջակն օգըմ ա անց կենա, բուրդան կոտկաստեղան ցաքաթը պոք ա կալիս, ընգնըմ ճորը: Հեխածը ծոնզնը տալիս ա կետի դրադին, լաց ա իլըմ:

Տու մի ասիլ, կետրմը խոսող ծոկնըն ա ապրիլիս իլըմ: Վեր լսըմ ա, թա էտ մարթը հունց ա տառնը-տառնը լաց իլըմ, մեխսկը կալիս ա, ճիրին տական մըն ոսկան շինած ցաքաթ ա հանըմ:

—Էս քու ցաքաթն ա, —ասըմ ա:

—Զէ:

Մըն ալ ա մըննըմ ճիրին տակը հու մըն արծաթա ցաքաթ ա պիրըմ:

—Էս քու ցաքաթը չի՞, —հըրցընըմ ա:

—Զէ:

Մըն ալ մըննըմ ա ճիրին տակը տուս պիրըմ ընգած ցաքաթը, մեկնըմ:

—Այ էս իմ ցաքաթն ա, —ուրիսանըմ ա մարթը, —այ օրթնվի՛ քու ծնունդը, —ասըմ ա, եր ա օնըմ ուրա ցաքաթը հոե իլըմ ծմակը:

Ծոկնը վեր տենըմ ա, թա շինչքան աշկը կոչտ մարթ ա, ընդրան ա բախչըմ ոսկան ու արծաթան շինած ցըքըթնեն, ասըմ ա. —Քե՛ղ իլի, տար հալա՛լըտ իլի, խերավ պընըցնիս:

Էս մարթըս ցախ ա կրտրըմ ծմակըմը, պեռնըմ ուլախին, կալիս ա տոն, լոխ հըրևաննեն հըվաքվըն ըն, հայիլ-մայիլ կրտրած թրմաշա յըն անըմ էնքան նախշուն ցըքըթնեն: Էս հրաշկ ցըքըթներին խաքաղը հըսնըմ ա աշկածակ քյոխվին: Քոնը տանըմ չի: Քըշերավ եր ա կենըմ, ցաքաթը եր օնըմ, քունում ծմակին դոլը: Հըսնըմ ա կրոմընջին, օգըմ ա ոննը տինի յրան, դաստինա ցաքաթը քըլըմ ա ճորը, ինքն ալ դըրադին նըստըմ ա, սոտ լաց իլըմ:

Ծոկնը սիֆտան ոսկան շինած ցաքաթն ա հանըմ շանց տալիս. —Էս քու ցաքաթն ա՞:

Քյոլսվին աշկերը մարադ մըննած կատվին աշկի նման փլրստ-
րատին ըն անըմ, ասըմ ա. — Հա քը մատաղ, իմն ա, վե կա:

Ծնկնը ասըմ ա. — Դե վեր քունն ա, կըզացի՛, ո'ւնք կալ:

Քյոլսվան կոզկըմ ա, թա եր օնի, բնւղնւրմիշ ա իլըմ, թրըմփ
ընգնրմ ա ճորը:

Ծնկնըն ալ կնւղնւմ ա չալ ըռկսին, ոննան քաշ ա տալիս հեխ-
տըմ:

Չարը թո չարավ կործանվե, պարին թըքավերի ըշխարքըմը:

Յղորմա՛ծ Աստոծ, տու մըզանա չարը հեռու պահիս:

